ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 450

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

Երևան քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Զ.Քանաքեռցու փողոց N128/6 հասցեում գտնվող 01-012-0003-0005 կադաստրային ծածկագրով 1.219286 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողեր	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Զ.Քանաքեռցու փողոց N128/6 հասցեում գտնվող 01-012-0003-0005 կադաստրային ծածկագրով 1.219286 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով.

- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տրամադրված «Գազպրոմ Արմենիա» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունների գրություններով ներկայացված պահանջը (կցվում են):
- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից տրամադրված «Տելեկոմ Արմենիա» ԲԲ ընկերության գրությամբ ներկայացված պահանջը (կցվում է):

4. Երևան քաղաքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Երևան քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ Երևան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա. Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ. Դավթյան

Երևան, «6» «դեկտեմբերի» 2023 թ.